Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

05.06.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 01.06.2015թ.-ի թիվ 68 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Եղեգնաձորի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում անցկացվեց 2015թ.-ի բյուջետային տարվա գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց գործակալության պետ՝ Հ.Դավթյանը:

Նախնական տվյալներ.

Գործակալությունում ընդգրկված են 1 գլխավոր մասնագետ, 3 առաջատար մասնագետ, 1 առաջին կարգի մասնագետ և 1 երկրորդ կարգի մասնագետ: Գործակալությունը ղեկավարում է գործակալության պետը: *Գործակալությունն ունի կանոնադրություն՝* հաստատված մարզպետի կողմից: Գործակալության պետն և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Գործակալության գործառույթներն են՝ ընտանեական նպաստների վճարում, սոցիալական նպաստների վճարում, *մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների վճարում, հրատապ օգնությունների* վճարում և ավանդների դիմաց փոխհատուցում:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում գործակալության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

Գործակալության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Փախստականների մասին>>, <<Սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական անհատական քարտերի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Փախստականների մասին>>, <<Սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական անհատական քարտերի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված, մարզպետին վերապահված լիազորությունները գործակալությանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ: Գործակալության կողմից առ 01.06.2015թ.-ի դրությամբ սպասարկվել են՝ 1127 քաղաքացի ընտանեական նպաստների ծրագրով՝ 166777.5 հազ.դրամ ընդհանուր գումարով, 334 քաղաքացի սոցիալական նպաստների ծրագրով՝ 27455 հազ.դրամ ընդհանուր գումարով, 128 քաղաքացի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների ծրագրով՝ 13536 հազ.դրամ ընդհանուր գումարով, 132 քաղաքացի հրատապ օգնությունների ծրագրով՝ 8160 հազ.դրամ ընդհանուր գումարով և 91 քաղաքացի ավանդների դիմաց փոխհատուցում ծրագրով 14478.6 հազ.դրամ ընդհանուր գումարով: Առ 01.06.2015թ.-ի դրությամբ ընդգրկված ընտանեական նպաստ ստացող ընտանիքների թիվը կազմել է 89 ընտանիք, հրատապ օգնությունների ծրագրում 1-ին եռամսյակում ընդգրկվել է 77 քաղաքացի և 2-րդ եռամսյակի 2 ամսում 128 քաղաքացի:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ գործակալության կանոնադրությամբ և բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Գործակալության պետ՝ Հ. Դավթյան